Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
մայիսի 19-ի նիստի N 19
արձանագրային որոշման

(Գործառնություն թիվ՝ 46540)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ

միջև

Ամսաթիվ՝ 2016թ. [մայիսի 11]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ I – ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 3
Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը 3
Բաժին 1.02. Սահմանումներ..... 5
Բաժին 1.03. Մեկնաբանություն.....10

ՀՈԴՎԱԾ II – ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....10
Բաժին 2.01. Գումար և արժույթ 10
Բաժին 2.02. Վարկի այլ ֆինանսական պայմաններ.....11
Բաժին 2.03. Մասհանումներ 12

ՀՈԴՎԱԾ III - ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ 13
Բաժին 3.01. Ծրագրի այլ հաստատական հոդվածներ.....13

ՀՈԴՎԱԾ IV – ԿԱՍԵՑՈՒՄ; ԱՐԱԳԱՑՈՒՄ; ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ.....15
Բաժին 4.01. Կասեցում 15
Բաժին 4.02. Մարման ժամկետի կրճատում.....15

ՀՈԴՎԱԾ V – ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ.....15
Բաժին 5.01. Գործողության մեջ մտնելուն նախորդող պայմանները 15
Բաժին 5.02. Իրավաբանական եզրակացություններ 16
Բաժին 5.03. Գործողության մեջ չմտնելու հիմքով դադարում 18

ՀՈԴՎԱԾ VI - ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 18
Բաժին 6.01. Ծանուցումներ 18

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1

ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԴԱՍԵՐ և ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ.....1

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ, որը թվագրված է 2016թ. մայիսի 11-ով, **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** («Վարկառու») և **ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ** («Բանկ») միջև:

ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Բանկը հիմնադրվել է կոնկրետ ծրագրերին ֆինանսավորում տրամադրելու նպատակով և խրախուսելու անցումը բաց շուկայական կողմնորոշմամբ տնտեսությունների, խթանելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, որոնք ստանձնել են հանձնառություն և կիրառում են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքները,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Վարկառուն մտադրված է իրականացնել Ծրագիրն, ինչպես նկարագրված է Հավելված 1-ում, որը մշակված է՝ օժանդակելու Վարկառուին Գյումրու քաղաքապետարանի («Ծրագրի Սուբյեկտ») հիմնական փողոցների վերակառուցման և քաղաքային լուսավորության արդիականացման գործընթացներում,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Ծրագիրը կիրականացվի Ծրագրի Սուբյեկտի կողմից,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Վարկառուն դիմել է Բանկին Ծրագրի մի մասը ֆինանսավորելու համար աջակցություն ցուցաբերելու խնդրանքով,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Բանկը այժմ կազմակերպում է մինչև 7,300,000 եվրո գումարի չափով դրամաշնորհային հիմունքներով ֆինանսավորման տրամադրումը («Համաֆինանսավորման Դրամաշնորհ»)՝ աջակցելու Վարկառուին Ծրագրի իրականացման գործընթացում, և այդ գումարը պետք է տրամադրվի Բանկի բաժնետերերի հատուկ հիմնադրամի և / կամ միջազգային դոնորների կողմից,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Բանկը այժմ կազմակերպում է տեխնիկական համագործակցության միջոցների տրամադրումը, որոնց ընդհանուր գումարը կկազմի մինչև 1,940,000 եվրո, դրամաշնորհային հիմունքներով («ՏՀ դրամաշնորհներ»)՝ աջակցելու Վարկառուին Ծրագրի Մաս Բ-ի իրականացման գործընթացում (ներառյալ՝ Ծրագրի նախապատրաստմանն

առնչվող տեխնիկական համագործակցության միջոցները՝ ընդհանուր 340 000 եվրո գումարի չափով), և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Բանկը համաձայնել է, *inter alia* (ի թիվս այլոց), վերոհիշյալի հիման վրա, Վարկառուին տրամադրել վարկ 14,600,000 Եվրո գումարի չափով՝ համաձայն պայմանների, որոնք սահմանված կամ հղվում են սույն Համաձայնագրում:

Այսուհետ կողմերը համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I – ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը

Բանկի՝ 2012թ. դեկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ Պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում ու դառնում են կիրառելի սույն Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ, սակայն ենթակա են հետևյալ փոփոխությունների (այսպես փոփոխված այդ դրույթներն այսուհետ անվանվում են «Ստանդարտ Պայմաններ»):

(a) Եվրոյի՝ "Euro", "EUR" կամ "€" սահմանումը Ստանդարտ Պայմանների Բաժին 2.02-ում պետք է, սույն Համաձայնագրի նպատակների համար, փոփոխվի հետևյալ կերպով.

«Եվրո՝ "Euro", "EUR" կամ "€" նշանակում է Եվրամիության անդամ պետությունների օրինական արժույթը, որն այդ երկրներում ընդունվել է որպես իրենց արժույթ Եվրամիության՝ տնտեսական և արժութային միության մասին օրենքների համաձայն»:

(b) «Արգելված գործունեություն» սահմանումը Ստանդարտ Պայմանների Բաժին 2.02-ում պետք է, սույն Համաձայնագրի նպատակների համար, փոփոխվի հետևյալ կերպով.

«Արգելված գործունեություն» նշանակում է որևէ կոռումպացված գործունեություն, խարդախություն, հարկադրանք, քողարկված գործունեություն»:

(c) «Թիրախային օր» (TARGET - Trans-European Automated Real-time Gross Settlement Express Transfer System) սահմանումը Ստանդարտ Պայմանների Բաժին 2.02-ում պետք է, սույն Համաձայնագրի նպատակների համար, փոփոխվի հետևյալ կերպով.

«Թիրախային օր» նշանակում է որևէ օր, երբ Եվրամիության շրջանակներում գործող /Տրանս-Եվրոպական/ իրական ժամանակում գործող ավտոմատացված միջբանկային վճարային համակարգը բաց է՝ կատարելու Եվրոյով վճարումներ»:

(d) Ստանդարտ պայմանների Բաժին 2.02-ում (Սահմանումներ) «Հասանելի գումար» սահմանումը պետք է, սույն Համաձայնագրի նպատակների համար, փոփոխվի հետևյալ կերպ.

«Հասանելի գումար» նշանակում է Վարկի Տրանշ Ա-ի գումարը, որը չպետք է ժամանակ առ ժամանակ կասեցվի, մասհանվի կամ ենթակա լինի պայմանական կամ ոչ պայմանական Փոխհատուցման պարտավորության, գումարած՝ (i) Տրանշ Բ-ի Հասանելիության ամսաթվի դրությամբ Վարկի Տրանշ Բ-ի գումարը, որը չպետք է ժամանակ առ ժամանակ կասեցվի, մասհանվի կամ ենթակա լինի պայմանական կամ ոչ պայմանական Փոխհատուցման պարտավորության, և գումարած՝ (ii) Տրանշ Գ-ի Հասանելիության ամսաթվի դրությամբ Վարկի Տրանշ Գ-ի գումարը, որը չպետք է ժամանակ առ ժամանակ կասեցվի, մասհանվի կամ ենթակա լինի պայմանական կամ ոչ պայմանական Փոխհատուցման պարտավորության (սույն սահմանման մեջ օգտագործված բոլոր մեծատառով դրույթները, որոնք սույնով այլ կերպ չեն սահմանվում, ունեն Վարկային համաձայնագրով այդ դրույթներին վերագրված նշանակությունները):

(e) Ստանդարտ Պայմանների Բաժին 3.05-ի (Պարտավորության վճար և կանխավճար) պարբերություն (a)-ն պետք է, ույն Համաձայնագրի նպատակների համար, փոփոխվի հետևյալ կերպ.

« (a) Վարկառուն պետք է Բանկին վճարի Վարկային համաձայնագրով սահմանված չափով պարտավորության վճար, որը ենթակա է վճարման ամբողջ Հասանելի գումարի նկատմամբ, գումարած՝ Փոխհատուցման

պարտավորության ենթակա և դեռևս չմասհանված Վարկի ցանկացած գումարի, պայմանով, որ ոչ պայմանական Փոխհատուցման պարտավորության ենթակա Վարկի գումարի նկատմամբ վճարման ենթակա Պարտավորության վճարը տարեկան 0.5%-ով ավելի, քան Վարկային համաձայնագրում սահմանված Պարտավորության վճարը: Պարտավորության վճարը կառաջանա՝

(1) Տրանշ Ա-ի համար՝ Վարկային համաձայնագրի ամսաթվից հետո վաթսուներորդ (60) օրվանից,

(2) Տրանշ Բ-ի համար՝ Տրանշ Բ-ի Հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ (7) օրվանից,

(3) Տրանշ Գ-ի համար՝ Տրանշ Գ-ի Հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ (7) օրվանից,

(4) Ոչ պայմանական Փոխհատուցման պարտավորության ենթակա Վարկի գումարի նկատմամբ վճարման ենթակա Պարտավորության վճարի դեպքում՝ նման ոչ պայմանական Փոխհատուցման պարտավորության տրամադրման ամսաթվից,

և Պարտավորության վճարը կառաջանա և կհաշվարկվի նույն հիմքով, ինչ տոկոսը Բաժին 3.04 (b) (ii)-ի ներքո: Պարտավորության վճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր Տոկոսագումարի վճարման ամսաթվին (եթե անգամ որևէ տոկոս կարող է չվճարվել այդ ամսաթվին)՝ սկսած Ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին Տոկոսագումարի վճարման ամսաթվից»:

(f) Հետևյալ սահմանումը պետք է, սույն Համաձայնագրի նպատակների համար, ավելացվի Ստանդարտ Պայմանների Բաժին 2.02-ին.

«Գողություն» նշանակում է այլ անձի պատկանող գույքի յուրացում»:

Բաժին 1.02. Սահմանումներ

Որտեղ որ նրանք օգտագործվել են սույն Համաձայնագրում (ներառյալ Նախաբանը և Հավելվածները), եթե այլ բան սահմանված չէ, կամ եթե համատեքստն այլ կերպ չի պահանջում, Նախաբանում սահմանված տերմիններն ունեն այնտեղ նրանց տրված համապատասխան իմաստները, Ստանդարտ Պայմաններում սահմանված տերմիններն ունեն այնտեղ նրանց տրված համապատասխան իմաստները, իսկ հետևյալ տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

«Վարկառուի լիազորված ներկայացուցիչ» նշանակում է Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարը:

«Ֆինանսական տարի» նշանակում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին սկսվող՝ Վարկառուի ֆինանսական տարին:

«Դրամաշնորհային համաձայնագրեր» նշանակում է.

(a) Տրանշ Ա-ի դրամաշնորհային համաձայնագիրը,
(b) Տրանշ Բ-ի դրամաշնորհային համաձայնագիրը,
(c) Տրանշ Գ-ի դրամաշնորհային համաձայնագիրը և
(d) յուրաքանչյուր ՏՀ դրամաշնորհային համաձայնագիր:

«ԾԻԹ» նշանակում է ծրագրի իրականացման թիմ, որը նշված է Ծրագրի համաձայնագրում, ստեղծվել է Ծրագրի Սուբյեկտի կողմից՝ Ծրագրի իրականացման բոլոր ասպեկտների համակարգման, կառավարման, մոնիտորինգի և գնահատման նպատակով:

«Ծրագրի Իրականացման Համաձայնագիր» նշանակում է ծրագրի իրականացման համաձայնագիրը, որը պետք է կնքվի Վարկառուի և Ծրագրի Սուբյեկտի միջև, Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ:

«Ծրագրի Համաձայնագիր» նշանակում է ծրագրի համաձայնագիր Բանկի և Ծրագրի Սուբյեկտի միջև, սույն ամսաթվով թվագրված, որով Ծրագրի Սուբյեկտը ստանձնել է որոշակի պարտավորություններ Բանկի նկատմամբ Ծրագրի իրականացման կապակցությամբ:

«Ծրագրի Փաստաթղթեր» նշանակում է.

(Ա) Սույն Համաձայնագիրը,

(Բ) դրամաշնորհային համաձայնագրերից յուրաքանչյուրը,

(Գ) Ծրագրի համաձայնագիրը,

(Դ) Ծրագրի իրականացման համաձայնագիրը և

(Ե) վերը նշված համաձայնագրի ցանկացած փոփոխություններ կամ լրացումներ, ինչպես նաև դրան վերաբերող ցանկացած այլ փաստաթուղթ:

«ՏՀ դրամաշնորհային համաձայնագրեր» նշանակում է.

(a) *Ծրագրի իրականացման աջակցություն.* Համաձայնագիր, որը կնքվելու է Բանկի և Ծրագրի Սուբյեկտի միջև, ըստ որի Բանկը պետք է մոբիլիզացնի ՏՀ դրամաշնորհ մինչև 1,200,000 եվրո գումարի չափով՝ ֆինանսավորելու ծրագրի իրականացման աջակցությունը ԾԻԹ-ի միջոցով, որը տրամադրվելու է հետևյալ կերպով.

(1) Ծրագրի Մաս Ա-ի իրականացումը կներառի ինժեներական նախագծում և աշխատանքների պայմանագրերի համար գնումներ (այդ թվում, աշխատանքների համար մրցութային փաստաթղթերի պատրաստում, մրցույթների գնահատում և պայմանագրի շնորհում),

(2) Ծրագրի Մաս Բ-ի իրականացումը կներառի աշխատանքների պայմանագրերի շինարարության վերահսկողություն, և

(3) Ծրագրի Մաս Գ-ն կներառի մրցութային փաստաթղթերի նախապատրաստում և

գնումների աջակցություն սպասարկման պայմանագրերի համար, որոնք ընդգրկում են փողոցների ենթակառուցվածքները և քաղաքային լուսավորությունը և որոնք պետք է կնքվեն մասնավոր հատվածի հետ,

(b) *վերահսկողության և կառավարման աջակցություն*. համաձայնագիր, որը պետք է կնքվի Բանկի և Ծրագրի Սուբյեկտի միջև, համաձայն որի Բանկը պետք է մոբիլիզացնի ՏՀ դրամաշնորհ մինչև 240,000 եվրո գումարի չափով՝ ֆինանսավորելու փողոցների ենթակառուցվածքների և քաղաքային լուսավորության սպասարկման պայմանագրերի վերահսկողության և կառավարման աջակցությունը, և

(c) *ավտոտրանսպորտային միջոցների կայանման վերաբերյալ ռազմավարություն և հարակից գործողությունների ծրագիր*. համաձայնագիր, որը պետք է կնքվի Բանկի և Ծրագրի Սուբյեկտի միջև, որով Բանկը մոբիլիզացնելու է մինչև 160,000 եվրո գումարի չափով ՏՀ Դրամաշնորհ՝ ֆինանսավորելու ավտոմեքենաների կայանման երկարաժամկետ ռազմավարություն և գործողությունների միջնաժամկետ ծրագիր ավտոկայանատեղիների ոլորտում, այդ թվում՝ ավտոմեքենաների կայանման փորձնական ծրագիր ի հայտ բերելու նպատակով:

«Տրանշ Ա» նշանակում է վարկի առավելագույն մայր գումարը, որը նախատեսված է Բաժին 2.01(b)(1)-ում կամ, ինչպես համատեքստը կարող է պահանջել՝ վարկի մայր գումարը, որը ժամանակ առ ժամանակ ենթակա է մարման:

«Տրանշ Ա-ի Դրամաշնորհի համաձայնագիր» նշանակում է դրամաշնորհի համաձայնագիր, թվագրված սույն ամսաթվով Վարկառուի, Բանկի բաժնետերերի հատուկ հիմնադրամի և Բանկի միջև, համաձայն որի Բանկի բաժնետերերի հատուկ հիմնադրամը Վարկառուին կտրամադրի համաֆինանսավորման դրամաշնորհ մինչև 2.650.000 եվրո գումարի չափով:

«Տրանշ Բ» նշանակում է վարկի առավելագույն մայր գումարը, որը նախատեսված է Բաժին 2.01(b)(2)-ում կամ, ինչպես համատեքստը կարող է պահանջել՝ վարկի մայր գումարը, որը ժամանակ առ ժամանակ ենթակա է մարման:

«Տրանշ Բ-ի Հասանելիության ամսաթիվ» նշանակում է Բանկի կողմից Վարկառուին գրավոր ծանուցված ամսաթիվը, որի դրությամբ Տրանշ Բ-ն հասանելի է դարձել Վարկառուին: Վարկառուին Տրանշ Բ-ն հասանելի դարձնելու մասին որոշումը կայացվելու է Բանկի կողմից՝ իր բացարձակ հայեցողությամբ:

«Տրանշ Բ-ի Դրամաշնորհի համաձայնագիր» նշանակում է դրամաշնորհի համաձայնագիր, որը պետք է կնքվի Վարկառուի, Բանկի բաժնետերերի հատուկ հիմնադրամի կամ այլ դոնորի և Բանկի միջև, համաձայն որի Բանկի բաժնետերերի հատուկ հիմնադրամը կամ այլ դոնոր Վարկառուին կտրամադրի համաֆինանսավորման դրամաշնորհ մինչև 2.650.000 եվրո գումարի չափով:

«Տրանշ Գ» նշանակում է վարկի առավելագույն մայր գումարը, որը նախատեսված է Բաժին

2.01(b)(c)-ում կամ, ինչպես համատեքստը կարող է պահանջել՝ վարկի մայր գումարը, որը ժամանակ առ ժամանակ ենթակա է մարման:

«Տրանշ Գ-ի Հասանելիության ամսաթիվ» նշանակում է Բանկի կողմից Վարկառուին գրավոր ծանուցված ամսաթիվը, որի դրությամբ Տրանշ Գ-ն հասանելի է դարձել Վարկառուին: Վարկառուին Տրանշ Գ-ն հասանելի դարձնելու մասին որոշումը կայացվելու է Բանկի կողմից՝ իր բացարձակ հայեցողությամբ:

«Տրանշ Գ-ի Դրամաշնորհի համաձայնագիր» նշանակում է դրամաշնորհի համաձայնագիր, որը պետք է կնքվի Վարկառուի, Բանկի բաժնետերերի հատուկ հիմնադրամի կամ այլ դոնորի և Բանկի միջև, համաձայն որի Բանկի բաժնետերերի հատուկ հիմնադրամը կամ այլ դոնոր Վարկառուին կտրամադրի համաֆինանսավորման դրամաշնորհ մինչև 2.000.000 եվրո գումարի չափով:

Բաժին 1.03. Մեկնաբանություն

Սույն Համաձայնագրում հղումը համապատասխան Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին պետք է ընկալվի որպես հղում սույն Համաձայնագրի այդ կոնկրետ Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին, եթե սույն Համաձայնագրով այլ բան սահմանված չէ:

ՀՈԴՎԱԾ II – ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաժին 2.01. Գումար և արժույթ

(a) Բանկը համաձայնում է վարկի տեսքով տրամադրել Վարկառուին, սույն Համաձայնագրում սահմանված կամ հղվող պայմաններով 14,600,000 եվրո գումար:

(b) Վարկը պետք է բաղկացած լինի հետևյալ երեք Տրանշից.

(1) Տրանշ Ա-ի գումարը՝ 5,300,000 եվրո,

(2) Տրանշ Բ-ի գումարը՝ 5,300,000 եվրո, և

(3) Տրանշ Գ-ի գումարը՝ 4,000,000 եվրո:

Բաժին 2.02. Վարկի այլ ֆինանսական պայմաններ

(a) Մասհանման Նվազագույն Գումարը պետք է լինի 50,000 Եվրո:

(b) Վաղաժամկետ Մարման Նվազագույն Գումարը պետք է լինի 500,000 Եվրո:

(c) Չեղյալ հայտարարման Նվազագույն Գումարը պետք է լինի 500,000 Եվրո:

(d) Տոկոսագումարի Վճարման Ամսաթվերը պետք է լինեն յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը և հոկտեմբերի 16-ը:

(e) (1) Վարկառուն պետք է մարի Վարկը 24 կիսամյակային վճարումներով յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին, Վարկի Մարման Առաջին Ամսաթիվը պետք է լինի Տոկոսագումարի վճարման ամսաթիվը, որն ընկնում է Վարկային Համաձայնագրի և Վարկի Մարման վերջին ամսաթվի երրորդ տարելիցի ամսաթվին կամ անմիջապես դրանից հետո՝ 2031թ. ապրիլի 16-ը:

(2) Չնայած վերոհիշյալին՝ եթե (i) Վարկառուն չի մասհանում, կախված դեպքից, Տրանշ Ա-ի և/կամ Տրանշ Բ-ի և/կամ Տրանշ Գ-ի ամբողջ գումարը մինչև Վարկի Մարման Առաջին Ամսաթիվը, որը նշված է սույն Բաժին 2.02.(e)-ում, և (ii) Բանկը երկարաձգում է Վերջին Հասանելիության Ամսաթիվը, որը նշված է Բաժին 2.02.(f)-ում ստորև, մինչ որևէ մի ամսաթիվ, որն ընկնում է Վարկի Մարման առաջին Ամսաթվից հետո, ապա Վարկի Մարման Առաջին Ամսաթվին կամ դրանից հետո գումարի յուրաքանչյուր մասհանման գումար պետք է բաշխվի մարման համար՝ հավասար գումարներով Վարկի Մարման մի քանի Ամսաթվերի վրա, որոնք ընկնում են այդ մասհանման ամսաթվից հետո (և Բանկը կլորացնում է այդ կերպ բաշխված գումարներն ըստ անհրաժեշտության՝ յուրաքանչյուր դեպքում ամբողջ թվեր ստանալու համար): Բանկը պետք է ժամանակ առ ժամանակ ծանուցի Վարկառուին այդ բաշխումների մասին:

(f) (1) Տրանշ Ա-ի Վերջին Հասանելիության Ամսաթիվը պետք է լինի Վարկային Համաձայնագրի երրորդ տարելիցը կամ ավելի ուշ ընկնող մի ամսաթիվ, որը Բանկը իր հայեցողությամբ կարող է սահմանել և տեղեկացնել Վարկառուին:

(2) Տրանշ Բ-ի Վերջին Հասանելիության Ամսաթիվը պետք է լինի Տրանշ Բ-ի Հասանելիության ամսաթվի երրորդ տարելիցը կամ ավելի ուշ ընկնող մի ամսաթիվ, որը Բանկը իր բացարձակ հայեցողությամբ կարող է սահմանել և տեղեկացնել Վարկառուին:

(3) Տրանշ Գ-ի Վերջին Հասանելիության Ամսաթիվը պետք է լինի Տրանշ Գ-ի Հասանելիության ամսաթվի երրորդ տարելիցը կամ ավելի ուշ ընկնող մի ամսաթիվ, որը Բանկը իր բացարձակ հայեցողությամբ կարող է սահմանել և տեղեկացնել Վարկառուին:

(4) Եթե Տրանշ Ա-ի և/կամ Տրանշ Բ-ի և/կամ Տրանշ Գ-ի Հասանելի Գումարը կամ դրա որևէ մաս ենթակա է Ֆիքսված Տոկոսադրույքի, և Բանկը հետաձգում է համապատասխան Տրանշի Վերջին Հասանելիության Ամսաթիվը, Վարկառուն պետք է անհապաղ վճարի Բանկին Պայմանների փոփոխության հետ կապված և համապատասխան Տրանշի դեպքում հաշվարկված ծախսերի դիմաց այնպիսի գումար, որը ժամանակ առ ժամանակ կնշվի Բանկի կողմից և որի մասին Վարկառուն կծանուցվի գրավոր տեսքով:

(g) Հանձնառության Վճարի դրույքը պետք է լինի տարեկան 0.5 տոկոս:

(h) Վարկը ենթակա է Փոփոխվող տոկոսադրույքի: Չնայած վերոհիշյալին, Վարկառուն կարող է, որպես տարբերակ, այդ պահին վճարման ենթակա ամբողջ Վարկի կամ դրա մի մասի տոկոսագումարը Փոփոխվող տոկոսադրույքով վճարելու փոխարեն որոշել վճարել Վարկի այդպիսի մի մասի տոկոսագումարը Ֆիքսված տոկոսադրույքով, համաձայն Ստանդարտ Պայմանների Բաժին 3.04(c)-ի, այն պայմանով, որ, սույն Բաժին 2.02(h)-ի նպատակների համաձայն, վարկի Մայր գումարը, որը Փոփոխվող տոկոսադրույքից անցնում է Ֆիքսված տոկոսադրույքի, չպետք է 1,000,000 եվրոյից պակաս լինի:

Բաժին 2.03. Մասհանումներ

Հասանելի Գումարից կարելի է մասհանումներ անել ժամանակ առ ժամանակ՝ համաձայն Հավելված 2-ի դրույթների՝ ֆինանսավորելու (1) Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների ու

ծառայությունների խելամիտ գներով գնումների կապակցությամբ կատարված (կամ, եթե Բանկը համաձայնում է, կատարվելիք) ծախսերը և (2) Մեկնարկային կոմիսիոն վճարը:

ՀՈԴՎԱԾ III – ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Բաժին 3.01. Ծրագրի այլ հաստատական հոդվածներ

Բացի Ստանդարտ Պայմանների Հոդվածներ IV-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ Վարկառուն պետք է, եթե Բանկն այլ բան չի նախատեսում.

(a) Հասանելի դարձնի Վարկի միջոցները Ծրագրի Սուբյեկտի համար, Բանկի համար ընդունելի պայմաններով՝ Ծրագրի իրականացման նպատակով, Բաժին 2.03-ում նախատեսված նպատակների համաձայն,

(b) ապահովի, որպեսզի Ծրագրի Սուբյեկտը օգտագործի Վարկի միջոցները՝ իրականացնելու այն նպատակները, որոնց համար տրամադրվել է Վարկը,

(c) չփոխանցի, չփոփոխի, չեղյալ չհայտարարի և չհրաժարվի Ծրագրի Իրականացման Համաձայնագրի կամ վարկային համաձայնագրի որևէ դրույթից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի,

(d) ապահովի, որպեսզի Ծրագրի Սուբյեկտը կատարի Ծրագրի Համաձայնագրով և Ծրագրի այլ փաստաթղթերով, որոնց կողմ նա հանդիսանում է, սահմանված իր բոլոր պարտականությունները, ներառյալ, առանց սահմանափակման, իր այն պարտավորությունները, որոնք վերաբերում են.

(1) ծրագրի իրականացման թիմը ստեղծմանն ու գործունեությանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին [2.03]-ում,

(2) Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ծառայություններ գնումներին, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.04-ում,

(3) բնապահպանական և սոցիալական հարցերին, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին [2.05] -ում,

(4) Ծրագրի իրականացմանը աջակցելու նպատակով խորհրդատուների ներգրավմանն ու նրանց ծառայությունների օգտագործմանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.06-ում, և

(5) Ծրագրի և Ծրագրի Սուբյեկտի գործունեությանն առնչվող հարցերի մասին հաշվետվությունների պատրաստմանն ու ներկայացմանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.08-ում,

(e) ձեռնարկի կամ կազմակերպի, որպեսզի ձեռնարկվեն բոլոր այն լրացուցիչ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու բավարար միջոցներ Ծրագրի ավարտի համար:

(f) կնքի կամ ապահովի, որ Ծրագրի սուբյեկտը կնքի Տրանշ Գ-ի Դրամաշնորհային համաձայնագիր համապատասխան դոնորի կողմից նման Համաֆինանսավորման դրամաշնորհի հաստատման ամսաթվից ոչ ուշ, քան 60 օր հետո և բոլոր կողմերի կողմից Տրանշ Գ-ի Դրամաշնորհային համաձայնագրի կատարումից հետո 90 օրվա ընթացքում Բանկին առաքի Վարկառուի անունից Արդարադատության նախարարի կողմից տրամադրված կարծիքն առ այն, որ Տրանշ Գ-ի Դրամաշնորհային համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորված և վավերացված է և առաքված է Վարկառուի անունից և առաջացնում է Վարկառուի վավեր և իրավաբանորեն պարտադիր պարտավություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների, և

(g) ապահովի, որ Բանկը բոլոր կողմերի կողմից Տրանշ Գ-ի Դրամածնորհային համաձայնագրի կատարումից հետո 90 օրվա ընթացքում ստանա Ծրագրի սուբյեկտի անունից Ծրագրի սուբյեկտի Իրավաբանական վարչության պետի կողմից տրամադրված կարծիք առ այն, որ Տրանշ Գ-ի Դրամաշնորհային համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորված և վավերացված է և առաքված է Ծրագրի սուբյեկտի անունից և առաջացնում է Ծրագրի սուբյեկտի վավեր և իրավաբանորեն պարտադիր պարտավություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների:

ՀՈԴՎԱԾ IV – ԿԱՍԵՑՈՒՄ; ԱՐԱԳԱՑՈՒՄ; ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

Բաժին 4.01. Կասեցում

Հետևյալը սահմանվում է Ստանդարտ Պայմանների Բաժին 7.01(a)(xvii)-ի նպատակներով.

(a) օրենսդրական և կարգավորող շրջանակները, որոնք կիրառելի են Վարկառուի տարածքում հանրային ճանապարհների և քաղաքային լուսավորության ոլորտի նկատմամբ, փոփոխվել, կասեցվել, չեղյալ են հայտարարվել կամ հրաժարվել են որևէ կերպով, բայց ոչ թե Բանկի կողմից գրավոր հաստատմամբ, կամ

(b) կանոնադրությունները փոփոխվել, կասեցվել, չեղյալ են հայտարարվել, ուժը կորցրել կամ հրաժարվել են, կամ

(c) Ծրագրի Սուբյեկտը չի կատարել Ծրագրի Իրականացման Համաձայնագրով սահմանված իր պարտավորություններից որևէ մեկը,

(d) Վարկառուն կամ Ծրագրի Սուբյեկտը չեն կատարել Դրամաշնորհային համաձայնագրերից որևէ մեկի ներքո իրենց որևէ պարտավորություններ:

Բաժին 4.02. Մարման ժամկետի կրճատում

Հետևյալը սահմանվում է Ստանդարտ Պայմանների Բաժին 7.06 (f)-ի նպատակներով:

(ա) Բաժին 4.01-ում նշված ցանկացած իրադարձություն տեղի է ունեցել և շարունակվել է երեսուն (30) օր այն բանից հետո, երբ Վարկառուն այդ մասին ծանուցում է ստացել Բանկից:

ՀՈԴՎԱԾ V – ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Բաժին 5.01. Տրանշ Ա-ի՝ Գործողության մեջ մտնելուն և մասհանումներ անելուն նախորդող պայմանները

Հետևյալ պայմանները սահմանվում են Ստանդարտ Պայմանների Բաժին 9.02(c)-ի նպատակներով՝ որպես սույն Համաձայնագրի գործողության մեջ մտնելուն և Տրանշ Ա-ի ներքո մասհանումներ կատարելուն նախորդող լրացուցիչ պայմաններ.

(a) Ծրագրի համաձայնագիրը, Ծրագրի Իրականացման Համաձայնագիրը և Տրանշ Ա-ի Դրամաշնորհային համաձայնագիրը ձևակերպվել և հանձնվել են դրանց բոլոր կողմերին, ինչպես նաև լիազորվել և կամ հաստատվել են բոլոր անհրաժեշտ կառավարական կամ կորպորատիվ գործողությունների միջոցով,

(b) ԾԻԹ-ը ստեղծվել է Ծրագրի Սուբյեկտի կողմից՝ Ծրագրի Համաձայնագրի պայմաններին համապատասխան, և

(c) Ծրագրի Սուբյեկտը արդեն պայմանագիր է կնքվել Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.06 [(a)(1)] դրույթների համաձայն պահանջվող խորհրդատուի հետ:

Բաժին 5.02. Իրավաբանական եզրակացություններ

(a) Ստանդարտ Պայմանների Բաժին 9.03(a)-ի նպատակներով իրավաբանի եզրակացությունը կամ եզրակացությունները պետք է տրվեն Վարկառուի անունից Արդարադատության Նախարարի կողմից, և հետևյալ հարցերը սահմանվում են որպես լրացուցիչ հարցեր, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ.

(1) սույն Համաձայնագիրը և Տրանշ Ա-ի Դրամաշնորհային համաձայնագիրը յուրաքանչյուրը պատշաճ կերպով լիազորվել կամ հաստատվել են և հանձնվել Վարկառուի կողմից և անունից համապատասխանաբար և կազմում են Վարկառուի վավեր և իրավաբանորեն պարտադիր պարտավորություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների:

(b) Ստանդարտ Պայմանների Բաժին 9.03(c)-ի նպատակներով իրավաբանի եզրակացությունը կամ եզրակացությունները պետք է տրվեն Ծրագրի Սուբյեկտի անունից, Ծրագրի Սուբյեկտի իրավաբանական վարչության պետի կողմից, և հետևյալ հարցերը սահմանվում են որպես լրացուցիչ հարցեր, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ.

(1) թե՛ Ծրագրի Համաձայնագիրը, թե՛ ծրագրի Իրականացման Համաձայնագիրը և թե՛ Տրանշ Ա-ի Դրամաշնորհային համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել կամ հաստատվել են և ձևակերպվել ու հանձնվել են Ծրագրի Սուբյեկտի կողմից և անունից

համապատասխանաբար և կազմում են Ծրագրի Սուբյեկտի վավեր և օրենքով պարտադրվող պարտավորություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների:

Բաժին 5.03. Տրանշ Բ-ի մասհանմանը նախորդող պայմանները

Բանկը, գործելով իր միակ և բացարձակ հայեցողությամբ, պետք է որոշի Վարկառուի համար Տրանշ Բ-ն հասանելի դարձնելու հարցը և այդ մասին ծանուցի Վարկառուին: Բանկի՝ Տրանշ Բ-ի առաջին մասհանումն անելու պարտավորությունը ենթակա է հետևյալ նախապայմանների կատարմանը, Բանկի պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ, կամ, Բանկի միակ և բացարձակ հայեցողությամբ՝ այդ պարտավորությունների կատարումից ազատմանը, ամբողջությամբ կամ մասամբ, որևէ պայմանների ենթակա կամ անվերապահորեն.

(a) Տրանշ Բ-ի Դրամաշնորհի Համաձայնագրի ներքո Համաֆինանսավորման դրամաշնորհը հաստատվել է համապատասխան դոնորի կողմից:

Բաժին 5.04. Տրանշ Գ-ի մասհանմանը նախորդող պայմանները

Բանկը, գործելով իր միակ և բացարձակ հայեցողությամբ, պետք է որոշի Վարկառուի համար Տրանշ Գ-ն հասանելի դարձնելու հարցը և այդ մասին ծանուցի Վարկառուին: Բանկի՝ Տրանշ Գ-ի առաջին մասհանումն անելու պարտավորությունը ենթակա է հետևյալ նախապայմանների կատարմանը, Բանկի պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ, կամ, Բանկի միակ և բացարձակ հայեցողությամբ՝ այդ պարտավորությունների կատարումից ազատմանը, ամբողջությամբ կամ մասամբ, որևէ պայմանների ենթակա կամ անվերապահորեն.

(a) Տրանշ Բ-ի Դրամաշնորհի Համաձայնագիրը, Բանկի պահանջները բավարարող ձևով և բովանդակությամբ, ձևակերպվել և հանձնվել է, և դրա՝ գործողության մեջ մտնելու կամ Վարկառուի՝ դրա ներքո մասհանումներ կատարելու իրավունքի բոլոր նախապայմանները բավարարվել են,

(b) Տրանշ Գ-ի Դրամաշնորհի Համաձայնագրի ներքո Համաֆինանսավորման դրամաշնորհը հաստատվել է համապատասխան դոնորի կողմից,

(c) Բանկը իր խորհրդատուներից կամ այլ կերպ ստացել է փորձաքննության արդյունքները Գյումրի քաղաքի առաջնային

ճանապարհներն ընդգրկող Ծրագրի՝ քաղաքային լուսավորության բաղադրիչի կապակցությամբ և

(d) իրավաբանական եզրակացությունը կամ եզրակացությունները պետք է տրվի Վարկառուի անունից՝ Արդարադատության նախարարի կողմից, և հետևյալ կետերը սահմանվում են որպես լրացուցիչ կետեր, որոնք պետք ներառվեն Բանկին ներկայացվող եզրակացության կամ եզրակացությունների մեջ,

(1) Տրանշ Բ-ի Դրամաշնորհի Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել և հաստատվել է, և հանձնվել է Վարկառուի կողմից և անունից և կազմում է Վարկառուի՝ վավեր և օրենքով պարտադրվող պարտավորություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների:

Բաժին 5.05. Գործողության մեջ չմտնելու հիմքով Դադարում

Սույն Համաձայնագրի ամսաթվից հետո 180 օր անց ամսաթիվը սահմանվում է Ստանդարտ Պայմանների Բաժին 9.04-ի նպատակներով:

ՀՈԴՎԱԾ VI – ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 6.01. Ծանուցումներ

Հետևյալ հասցեները սահմանվում են Ստանդարտ Պայմանների Բաժին 10.01-ի նպատակներով.

Վարկառուի համար՝

Ֆինանսների Նախարարություն,

Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0010,
Մելիք-Ադամյան փողոց, շենք 1

Ուղղվում է՝ Միջազգային համագործակցության բաժին

Ֆաքս՝ +374 11 800 132

Բանկի համար՝

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
Միացյալ Թագավորություն,
Լոնդոն EC2A 2JN,
Ուան Իքսչեյնջ Սքուեըր

Ուղղվում է՝ Գործառնությունների Կառավարման Բաժին

Ֆաքս՝ +44-20-7338-6100

ՎԵՐՈՀԻՇՅԱԼԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, սույն փաստաթղթի կողմերը, գործելով իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը չորս օրինակից և հանձնեցին այն [Լոնդոնում, Միացյալ Թագավորություն] վերը նշված ամսաթվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Անուն՝ Վաչե Գաբրիելյան
Պաշտոն՝ Փոխվարչապետ/Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ

_____

Անուն՝ Ֆրենսիս Մալիժ
Պաշտոն՝ Արևելյան Եվրոպայի և Կովկասի հարցերով գլխավոր տնօրեն

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծրագրի նպատակն է՝ աջակցել Վարկառուին հետևյալ գործընթացներում. Գյումրի քաղաքում հիմնական Ճանապարհների վերակառուցում և հանրային լուսավորության արդիականացում, այդ թվում (i) ասֆալտի և մայթերի նորոգում, ինչպես նաև ջրահեռացման/դրենաժային/ ենթակառուցվածքների արդիականացում, (ii) հետիոտնային նոր տարածքների կառուցում, (iii) քաղաքային լուսավորության ենթակառուցվածքների վերակառուցում և (iv) Գյումրու քաղաքապետարանի համար ավտոկայանատեղիների վերաբերյալ ռազմավարության մշակում:

2. Ծրագիրը կազմված է հետևյալ Մասերից, որոնք ենթակա են այնպիսի փոփոխությունների, որոնց շուրջ Բանկն ու Վարկառուն կարող են փոխհամաձայնության գալ ժամանակ առ ժամանակ.

Մաս Ա. Կապիտալ ծախսեր.

- ընտրված ճանապարհների վերակառուցում (ներառյալ մայթերի, ջրահեռացման և ճանապարհային անվտանգության լրացուցիչ աշխատանքները) (ֆինանսավորվելու է Տրանշ Ա և Տրանշ Բ-ի և հարակից դրամաշնորհների միջոցներից)

- Քաղաքային լուսավորության արդիականացում վերակառուցված ճանապարհների վրա (ֆինանսավորվելու է Տրանշ Ա և Տրանշ Բ-ի և հարակից դրամաշնորհների միջոցներից)

- Քաղաքային լուսավորության արդիականացում բոլոր այլ հիմնական փողոցներում (ֆինանսավորվելու է Տրանշ Գ-ի և հարակից դրամաշնորհի միջոցներից)

Մաս Բ – Տեխնիկական Համագործակցություն.

- Ծրագրի իրականացման աջակցության ծրագիր

- Աջակցություն քաղաքային լուսավորության տեխսպասարկման պայմանագրերի վերահսկողության և կառավարման գործընթացում

- Ավտոմեքենաների կայանման վերաբերյալ ռազմավարություն և Գործողությունների ծրագիր

3. Ակնկալվում է, որ Ծրագիրը կավարտվի մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԴԱՍԵՐ և ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ

1. Ստորև բերված աղյուսակը սահմանում է Դասերը, յուրաքանչյուր Դասին հատկացված Վարկի գումարը և յուրաքանչյուր Դասում ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսային հարաբերությունը:

2. Չնայած վերը բերված պարբերություն 1-ի դրույթներին, ոչ մի Մասհանում չպետք է կատարվի այն ծախսերի առնչությամբ, որոնք արվել են Վարկային համաձայնագրի ամսաթվից առաջ:

Հավելված 2-ին կից աղյուսակ

Դաս	Հատկացվող Վարկի Գումարը՝ Վարկի Արժույթով	Ֆինանսավորվելիք Ծախսումների տոկոսային հարաբերությունը
(1) ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ Ծրագրի Մաս Ա-ի համար: - Տրանշ Ա - Տրանշ Բ - Տրանշ Գ	 5,247,000 եվրո 5,247,000 եվրո 3,960,000 եվրո	 Պայմանագրային արժեքի մինչև 100%, առանց որևէ Հարկերի Պայմանագրային արժեքի մինչև 100%, առանց որևէ Հարկերի Պայմանագրային արժեքի մինչև 100%, առանց որևէ Հարկերի
(2) Մեկնարկային կոմիսիոն վճար - Տրանշ Ա - Տրանշ Բ - Տրանշ Գ	 53,000 եվրո 53,000 եվրո 40,000 եվրո	 100% 100% 100%
Ընդամենը	**14,600,000 եվրո**	